

ՄԻՐԶԱ ԱՂԻԳԵՕՉԱԼ-ԲԷԿԻ «ՂԱՐԱԲԱՂ-ՆԱՄԷ» ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արտակ Սաղալեան

Ղարաբաղի խանութեան մահմեդական պատմագիր Միրզա Աղիգեօղալ-Բէկի «Ղարաբաղ-Նամէ» աշխատութեան հայերէն թարգմանութիւնը պահուած է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում՝ 4463 թուահամարի տակ¹: Այս երկը շարադրուել է 1845 թուականին² Ղարաբաղի գաւառապետ, փոխգնդապետ Մ. Կոլիբապիւնի պատուէրով³ եւ ներկայացուել Կովկասի փոխարքայ Մ. Վորոնցովին:

Սոյն աշխատութեան հեղինակ Միրզա Աղիգեօղալ-Բէկը ծնուել է ԺԼ. դ. 80-ական թթ. սկզբին Ղարաբաղում: Նախնական կրթութիւնը ստացել է Շուշիի մեքթեբում: 1795 թ. ամռանը, երբ Իրանի Աղա Մուհամմադ խանի զօրքերը արշաւել են Ղարաբաղ, Աղիգեօղալ-Բէկը ծնողների հետ գաղթել է Թիֆլիս: Իսկ երբ արիւնարբու խանի յորդաները, չկարողանալով գրաւել Շուշին, արշաւել են Թիֆլիս, նրանց յաջողուել է փախչել Ախալքալաքի եւ Ախալցխայի կողմերը: Հետագայում Աղիգեօղալ-Բէկի ընտանիքը միացել է Գիւլիստանի Մելիք-Աբով Մելիք-Բեգլարեանի հպատակներին եւ բնակութիւն հաստատել Բոլնի-

1 Մատենադարանի ձեռագրացուցակում սոյն ձեռագիրը ներկայացուած է այսպէս. «ԺԹ. դ. (1828-ից յետոյ): Թերթ՝ 60: Թուղթ՝ 22x18: Միասին: Շղագիր: Տող՝ 20-23: Կազմ՝ ստուարաթուղթ» (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա, Երեւան, 1965, էջ 1218): Իրականում 1828 թ. աշխատութեան ժամանակագրական վերջին եզրն է, իսկ ձեռագիրը կարող էր կազմուած լինել միայն երկի շարադրման թուականից՝ 1845-ից յետոյ:

2 Мирза Адигезаль-бек, Карабаг-Наме, Баку, 1950, с. 44.

3 Նոյն տեղում, էջ 43:

սում⁴: Հայ մելիքի հովանաւորութիւնն ազատել է նրանց անվերջ թափառումներից:

1799 թ. վերջին Աղիգեօղալ-Բէկը ծառայութեան է անցել վրաց արքունիքում Ռուսաստանի նախարար Պ. Կոլպաենսկու մօտ որպէս գրագիր-թարգմանիչ եւ աշխատել մինչեւ 1800 թ. վերջը: Այդ ընթացքում էլ նրա մօտ ձեւաւորուել է ռուսական կողմնորոշումը, որին հաւատարիմ է մնացել ողջ կեանքում: Ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմի ժամանակ եղել է գեներալ-մայոր Դ. Լիսանսկիի քարտուղարը: 1811 թ. նրան շնորհուել է պողպորուէիկի զինուորական կոչում⁵:

Կովկասի կառավարչապետ, գեներալ Ա. Երմոլովի կարգադրութեամբ 1816 թ. Միրզա Աղիգեօղալ-Բէկը, որպէս ռուսական իշխանութիւնների վստահութիւնը վայելող անձ, մեկնել է Ղարաբաղ՝ Մեհմեթ Ղուլի խանի մօտ՝ այնտեղ մնալով մինչեւ վերջինիս փախուստը Իրան (1822 թ.): 1823-1826 թթ. նրան վստահուել է Ղարաբաղի սահմանապահ ուղեկալներից մէկի՝ հրամանատարութիւնը⁶:

Միրզա Աղիգեօղալ-Բէկը մասնակցել է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին: Ռուսական բանակին մատուցած ծառայութիւնների համար 1829 թ. նրան շնորհուել է կապիտանի զինուորական կոչում:

1829 թ. վերջին կամ 1830 թ. սկզբին՝ շուրջ երեսնամեայ զինուորական ծառայութիւնից յետոյ, զօրացրուել է: 1830-ա-

4 Նոյն տեղում, էջ 131:
5 Նոյն տեղում, էջ 132:
6 АКАК, т. VI, ч. I, Тифлис, 1874, л. 719, с. 516.

կան թթ. Միրզա Աղիգեօղալ-Բէկին աշխատել է Ղարաբաղի գաւառական դատարանում, ինչը նրան հնարաւորութիւն է տուել առաւել մօտիկից ծանօթանալ երկրի պատմութեանն ու կեանքին: Այս ժամանակաշրջանում էլ նա, ամենայն հաւանակաւորութեամբ, նիւթեր է հաւաքել իր պատմագրական աշխատութեան համար: Այդ տարիներին նրա ջանքերով վերանորոգուել է պարսիկ մեծ բանաստեղծ Նիզամուկիսաւէր դամբարանը⁷: 1845 թ. շուրջ 65 տարեկան հասակում գրել է իր «Ղարաբաղ-Նամէ» աշխատութիւնը: Միրզա Աղիգեօղալ-Բէկը վախճանուել է 1848 թ. սեպտեմբերի 9-ին: Նրա մարմինն ամփոփուել է Գերանբոյի Ռահիմլի գիւղի մօտ գտնուող ընտանեկան դամբարանում⁸:

Աղիգեօղալ-Բէկի «Ղարաբաղ-Նամէ» երկի հայերէն թարգմանութիւնը վերագրուած է Վարդան Օձնեցուն⁹: Այդ կապակցութեամբ պատմաբան Ռ. Տիտանեանը գրում է. «Վարդան Օձնեցու «Պատմութեան» եւ Միրզա Աղիգեօղալ-Բէկի «Ղարաբաղ-Նամէ» աշխատութեան այն գլուխների համեմատութիւնը, որոնք նուիրուած են Աղա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշաւանքին, ցոյց է տալիս, որ Վ. Օձնեցին օգտուել է նշուած գործից կամ սոյնի հայերէն թարգմանութիւնից, որն ամենայն հաւանակաւորութեամբ կատարել է ինքը՝ Վ. Օձնեցին, երբ Շուշի եւ Գանձակ քաղաքներում վարել է հոգեւոր տեսչի պաշտօն»¹⁰:

7 А. Бакиханов, Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 165.
8 Н. Минкевич-Мустафаева, С. Ахмедова, Мавзолей семейства Мирзы Адигезаль-бека, «Доклады АН Азерб. ССР», 1948, N 5, с. 220-225.
9 Ռ. Տիտանեան, Վարդան Օձնեցին պարսիկների 1795-1797 թթ. Անդրկովկաս կատարած արշաւանքի մասին, ՊՐՀ, 1965, թիւ 3, էջ 211-212:
10 Հայկական աղբիւրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասեան արշաւանքների մասին, աշխ. Ռ. Տիտանեանի, Երեւան, 1981, էջ 15:

Մենք նկատել ենք եւս մէկ փաստարկ, որը խօսում է այս տեսակետի իրաւացիութեան օգտին: Բանն այն է, որ «Ղարաբաղ-Նամէի» հայերէն թարգմանութեան ձեւաբան տիտղոսաթերթն ունի հետեւեալ գրութիւնը. «Որպիսութիւնք խանացն Գանձակայ եւ Արձանագրութիւնք Անի քաղաքի, եկեղեցեաց եւ վանօրէից Շիրակ ժամանակի, գրեալք ի ձեռն անյայտ հեղի-նակաց»¹¹, այսինքն՝ ժամանակին այս երկու աշխատութիւններն ընդգրկուած են եղել միեւնոյն ձեռագրում: Հետագայում սոյն ձեռագիրն ըստ բովանդակութեան բաժանուել է երկու մասի եւ դրանում ընդգրկուած աշխատութիւններից իւրաքանչիւրին տրուել է առանձին թուահամար (ՄՄ, ձեռ. NN է առանձին թուահամար (ՄՄ, ձեռ. NN է 4463 եւ 4464): Ստորոգյալստի է, որ N 4464 ձեռագրի գրիչը Վարդան Օձնեցին է¹², հետեւաբար՝ ինքնին ծնուած է ենթագրութիւնը, որ N 4463 ձեռագրում ընդգրկուած «Որպիսութիւնք խանացն Գանձակայ» («Ղարաբաղ-Նամէ») աշխատութեան թարգմանիչը եւս նա է:

Հաւանաբար, Վարդան Օձնեցին այս երկը թարգմանել է իր «Նոր քաղաքական եւ եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի Մեծի եւ Փոքր» աշխատութիւնը¹³ շարադրելու ընթացքում՝ դրանից օգտուելու նպատակով:

Միրզա Աղիգեօղալ-Բէկի «Ղարաբաղ-Նամէ» աշխատութեան հայերէն թարգմանութիւնն ունի հետեւեալ վերաբաժանումը. ա) Որպիսութիւնք խանացն Գանձակայ (2ա-3ա),

11 Մատենադարան, ձեռ. N 4463, էջ 1ա (այսուհետեւ սոյն ձեռագրի էջերը յղելու ենք շարադրմանը):
12 Մատենադարան, ձեռ. N 4464, էջ 3ա, Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա, էջ 1218:
13 Մատենադարան, ձեռ. N 4331:

անդին, որի համար չի խորշել անգամ դա-
 ւաճանութիւնից: Իսկ անթաքոյց դաւաճա-
 նութիւնը որպէս քողարկուած «դիւանա-
 գիտութիւն» ներկայացնելը սպառնում է
 նորանոր «դիւանագիտական» դաւաճանու-
 թիւններով: Եւ, վերջապէս, դաւաճանի ար-
 դարացումը կեանքի հիմնական նպատակ
 դարձրած՝ մեկիք Շահնազարի նորօրեայ
 «փաստաբանները» թող պատասխանեն
 մեր այն հարցին, թէ բազում վնասներից
 բացի ի՞նչ են շահել խամսայի մեկիքու-
 թիւններն ու արցախահայութիւնը նրա
 «դիւանագիտութիւնից»:

Ազիզեօղալ-Բէկը հաղորդում է նաեւ
 մի հետաքրքիր տեղեկութիւն մեկիք Շահ-
 նազարի դաւաճանութեանը նախորդած եղ-
 բայրասպանութեան մասին. «Մեկիքն Վա-
 րանդայ գաւառակի Մեկիք-Շահնազարն,
 հարեալ ընդ սէր մեկիքութեան, զհօրեղ-
 բայրն իւր զՄեկիք-Հիւսէինն սպան՝ զհամ-
 բաւ մեկիքութեան իւրոյ հրապարակելով
 յաշխարհի» (5բ): Թէեւ այստեղ հեղինակը
 շփոթել է նրանց արիւնակցական կապը,
 սակայն այս դէպքում էականը սպանու-
 թեան փաստի արձանագրումն է, այլ ոչ թէ
 նրանց ազգակցութիւնը²¹: Ստորոգ յայտնի
 է, որ մեկիք Շահնազարի հայրը եղել է Վա-
 րանդայի նշանաւոր մեկիք Հիւսէինը²², հե-
 տեւաբար՝ պարզից էլ պարզ է, որ վերջինս
 չէր կարող ունենալ նոյնանուն եղբայր: Ի-
 րականում սպանուած մեկիք Յովսէփը, ո-
 րին եւս պարսիկները Հիւսէին էին անուա-
 նում, մեկիք Շահնազարի խորթ եղբայրն
 էր²³: Այս է ճշգրիտ պատասխանը վերջին

21 Այդ մասին տե՛ս Ա. Մաղալեան, Արցախի մեկի-
 քութիւնները եւ մեկիքական տները XVII-XIX դդ.,
 Երեւան, 2007, էջ 179-182:
 22 Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրա-
 ցիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 210. Դիւան հայ
 վիմագրութեան, պրակ V, Արցախ, կազմեց Ա.
 Բարխուտարեան, Երեւան, 1982, էջ 150:
 23 Բաֆֆի, Խամսայի մեկիքութիւնները, Երկերի
 ժողովածոյ, հտ. 9, Երեւան, 1987, էջ 452. Ս. Զա-
 լալեանց, Պատմութիւն աշխարհին Աղուանից,

չրջանում արհեստականօրէն չարչրկուած
 այն հարցի, թէ իրականում ում է սպանել
 մեկիք Շահնազարը: Եւ, վերջապէս, մեկիք
 Շահնազարը պատմութեան դատաստանի
 առջեւ է կանգնում ո՛չ թէ եղբայրասպա-
 նութեան, այլ Փանահ խամսի ախաէի վրաս
 Օուշիի պաշտպանական ամրութիւնը մատու-
 ցելու եւ թուրք-թաթարական քոչուոր ցեղերի
 առջեւ հայոց Արցախի դարպասները բացելու
 համար:

Փանահ խամսի՝ Շուշիում հաստատուե-
 լուց յետոյ նորաստեղծ խանութեան կազմի
 մէջ էին մտնում Դաշտային Ղարաբաղի մի
 մասը եւ Շուշին: Սակայն, Շուշին էր, որ
 կենսունակութիւն հաղորդեց տափարակնե-
 րում անխուսափելի կործանման դատա-
 պարտուած խանութեանը՝ ձեւը վերածելով
 բովանդակութեան:

Երկի 3-րդ գլխում ներկայացուած է
 Փանահ խամսի յամառ պայքարը խամսայի
 մեկիքութիւններն իրեն հպատակեցնելու
 եւ Արցախում գերիշխանութիւն ձեռք բե-
 րելու համար: Խամսայի մեկիքները ստի-
 պուած էին նոր մարտահրաւէրների դիմա-
 կայելու Արցախում քոչուոր ջեւանշիր ցե-
 ղի սարջալու ճիւղի ցեղապետ Փանահի
 յայտնուելուց յետոյ: Հէնց Փանահի ժամա-
 նակներից սկսուեց այլացեղ եւ այլակրօն
 էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ:
 Թուրք-թաթարական քոչուոր ու կիսավայ-
 րենի ցեղախմբերի բնակեցումը Ղարաբաղի
 տարածքում իսկական չարիք դարձաւ ար-
 ցախահայութեան համար: Այդպիսով՝ Ար-
 ցախում բնակուող միատարր ու միաձոյլ
 հայութեան մէջ մտաւ օտարասեռ էթնիկ
 տարրը՝ իր հետ բերելով մտքի եւ մշակոյթի
 ահաւոր յետամնացութիւն: Խաչնարած ցե-
 ղերի՝ Արցախ ներթափանցելուց յետոյ ըն-
 կած ողջ ժամանակաշրջանը յագեցած է ե-
 ղել բնիկ հայերի եւ եկուոր էթնիկ տարրե-
 րի հակամարտութեամբ: Բերուած ցեղախմ-

Մատենադարան, մանրածապարէն N 367, էջ
 6ա-6բ:

բերը Փանահ խամսի համար առաջին հեր-
 թին յուսալի դաշնակիցներ էին Արցախի
 իրեն չենթարկուող հայկական մեկիքու-
 թիւնների դէմ պայքարում:

Հեղինակն իր շարադրանքը սկսում է
 Փանահ խամսի եւ Դիզակի մեկիք Եսայու-
 ընդհարումների նկարագրութեամբ: Նա
 մասնաւորապէս գրում է. «Յառաջին երեւ-
 ման Փանահ խամսին մեկիք Դիզակայ՝ սե-
 բունդ Մեկիք-Եկանայ, թշնամացեալ ընդ
 նմա՝ ի ժամանակս ժամանակս պատերազմ
 դրոնցին ընդդէմ նորա՝ յաղթելով նմա
 երբեմն եւս» (7բ-8ա): Այս տեղեկութեան
 իսկութիւնը հաստատում է նաեւ հայ
 պատմագիր Միրզա Իւսուֆ Ներսէսովը
 (Յովսէփ Ներսիսեանց), որը գրում է. «Փա-
 նահի խանութեան սկզբնական շրջանում
 Դիզակի Մեկիք-Եսային, որը յայտնի էր իր
 քաջութեամբ, նրա դէմ բազում կռիւներ է
 մղում: Որոշ ժամանակ (եօթ տարի - Ա. Մ.)
 նրանց միջեւ թէժ մարտեր էին տեղի ունե-
 նում: Եւ մի անգամ Մեկիք-Եսային Փանահ
 խամսի զօրքը այնպէս է ջախջախում ու ցա-
 բուցրիւ անում, որ նա, Բայաթի կողմը
 փախչելով, մէկ ամիս անտառներում է
 անցկացնում՝ չհամարձակուելով այնտեղից
 դուրս գալ»²⁴:

Սակայն, Միրզա Ազիզեօղալ-Բէկի այն
 հաղորդումը, թէ «ի վերջոյ Փանահ խամս
 յօժանդակութենէ բարձրելոյն յաղթող
 զտէալ՝ զոմանս ի նոցանէ սպան եւ զո-
 մանս տուժեաց անխնայ» (8ա), չի համա-
 պատասխանում իրականութեանը: Յայտնի
 է, որ Փանահ խամսի մահից յետոյ Մեկիք-Ե-
 սային դեռ երկար շարունակում էր պայքա-
 րել նրա օրդու՝ Իբրահիմ խամսի դէմ: Վեր-
 ջինիս կարգադրութեամբ էլ դաւադրաբար
 «ի 1230 (1781) թուին Դողու Մալիք Սա-
 յին սպանեցին»²⁵: Այդ կապակցութեամբ
 ուսու գորավար Ա. Սուվորովը 1781-ին իշ-

24 Միրզա Իւսուֆ Ներսէսով, Օշմարտացի պատ-
 մութիւն, Երեւան, 2000, էջ 50:
 25 Մատենադարան, ձեռ. N 3881, էջ 86բ:

խան Գ. Պոտեմկինին ուղղած զեկոյցում
 գրում է. «Շուշիի Իբրահիմ խամսը, չարու-
 թիւն գործադրելով, որոշ գումար է պա-
 հանջել Դիզակի մեկիք Եսայուց եւ չարա-
 ընդդէմ էլ սպանել նրան»²⁶: Մեկիք Եսայու-
 ընդդէմ թուականը հաստատում է նաեւ
 մահուան թուականը հաստատում է նաեւ
 նրա տապանաքարի արձանագրութեամբ.
 «Այս է տապան մեծին Մէլիք Եկանի որդի
 Մէլիք Եսայուն, եւ էր սա իշխան կարգեալ
 Նատիր շահէն: Լ. Գ. (33) ամ տիրեաց երկիրս
 Դիզակու եւ արար բազում քաջութիւն եւ
 յաղթութիւն ընդ անօրէնսն. եւ էր ինքն
 պարթեւ եւ յոյժ զօրաւոր քան զառաջինսն
 իւր. եւ թիւ կենաց նորա ԿԱ. (61) ամաց,
 վախճանեցաւ թուին ՌՄԼ. (1781), հոկտեմ-
 բերի Բ. (2)-ին երեքշաբթի. որ ընթեռնուք,
 մէկ Հայր մեղայ ասացէք. ամէն»²⁷:

1749 թ. Փանահ խամսը ուխտադրժօրէն
 ձերբակալեց հայ մեկիքների կողմից իր
 մօտ բանակցութիւնների եկած Զրաբերդի
 Ալլահգուլի սուլթանին եւ, Նախիջեւանի
 կառավարիչ Հէյդար-Ղուլի խամսի գրգմամբ
 հրամայեց գլխատել նրան: Փանահն այդ-
 պէս էր վարձահատոյց լինում իր կեանքը
 Նաղիր շահի դահիճների ձեռքից փրկած
 Զրաբերդի մեկիքին: Ալլահգուլի սուլթա-
 նին յաջորդել է եղբայրը՝ մեկիք Աղամը
 (Հաթամ):

Փանահի յաջորդ գոհը դարձաւ Խաչէն
 գաւառի տիրակալ մեկիք Ալլահգիբրդի Հա-
 սան-Ջալալեանը, որը դաւադրաբար սպա-
 նուեց 1755 թուականին: Դրանով անդառ-
 նալի հարուած էր հասցում Հասան-Ջալա-
 րեանների աշխարհիկ իշխանութեանը: Այ-
 նուհետեւ մեկիք Ալլահգիբրդուն դաւելու
 համար Փանահ խամսը Խաչէնի մեկիք է

26 Армяно-русские отношения в XVIII веке, т. IV,
 Ер., 1990, с. 172, Нагорный Карабах в междуна-
 родном праве и мировой политике. Документы и
 комментарии, т. I, составитель Ю. Барсегов, М.,
 2008, с. 79.
 27 Դիւան հայ վիմագրութեան, պրակ V, Արցախ, էջ
 179:

նշանակում են ճիշտագույն գիւղի տանուտէր Միրզախան Մելիք-Միրզախանեանին: Այսպիսով՝ Արցախի հինգ մելիքութիւններից երկուսը՝ Վարանդան եւ Խաչէնը, այլեւս անվնաս էին Փանահի համար, իսկ Գիւլիստանի, Ջրաբերդի եւ Դիզակի մելիքութիւնների վրայ նրա իշխանութիւնը չէր տարածւում:

Ջրաբերդի մելիք Ադամը եւ Գիւլիստանի մելիք Յովսէփը (մելիք Յուսուբ), «միաբանեալ թշնամանօք ընդդէմ խանին եւ ի բերդն Ջերմկայ (Ջրաբերդի - Ա. Մ.) ամրացեալ» (Տբ), երկար ժամանակ յաջողութեամբ մարտնչում էին նրա դէմ: «Փանահ խանն եւս ո՛չ սակաւ եցոյց ընդդէմ նոցա զբազմապիսի յարձակմունս,- գրում է Միրզա Աղիգեօղալ-Բէկը,- բայց ի պատճառս ամրութեան բերդի նոցա թէեւ դարձաւ առանց հասանելոյ ի նպատակ իւր, սակայն զարտորայս նոցա, որ ի ստորոտ լերինն, ոտնկոխ արարեալ հեծելազօրաց իւրոց՝ բոլորովմբ սպականեաց զայնս: Եւ զանցս ճանապարհաց ի չորից կողմանց խափանեաց, եւ այսպէս դամս չորս ներդրութեամբ եւ դառն վշտօք ընդդէմ նորա մնացին ի բերդի անդ յանշարժութեան: Եւ յայնմ ընդ երկար միջոցի բազումք թշնամացան ընդ խանին եւ յամենայն ժամ, ըստ օրինակի օտար թշնամեաց, հասուցանէին յիշեալ խանին ի պատերազմի վնասս բազումս» (Տբ-Գա):

Հետագայում այդ մելիքները նահանջում եւ ամրանում են Գիւլիստանի բերդում: Այնտեղ Փանահ խանի դէմ նրանց մղած յաղթական կռիւներից մէկի վերաբերեալ հետեւեալ ուշագրաւ տեղեկութիւններն է հաղորդում կապիտան Օթար Թումանովը 1754 թ. դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային յղած գեղեցագրում. «Հայերը գտնուած էին Սղնախում՝ Գիւլիստանի բերդում: Նրանց գլխաւորները մելիք Իսուֆ եւ մելիք Աթամ են կոչւում: Սրանք մինչ 1500 [գի-

նուած] մարդ ունին: Այս հայերի վրայ յարձակուել է Փանախանը, հայերը յաղթել են, Փանախանի մարդկանցից 300-ի չափ սպանել են: Այս պատերազմը եղաւ 1754 թուի օգոստոսի 26-ին»²⁸: Դիմադրութիւնը շարունակուել է նաեւ յաջորդ տարի, ինչպէս տեղեկանում ենք Օթար Թումանովի 1755 թ. մարտի 21-ի գեղեցագրից. «Սղնախի հայերը մեկուսացած են իրենց տեղում, ներկայումս Փանախանին եւ թուրքերին չեն ծառայում»²⁹: Իսկ նոյն թուականի նոյեմբերի 20-ի գեղեցագրով Օթար Թումանովը հաղորդում է Ղզլարի պարէտ Իւան Ֆոն Ֆրաուենգորֆին. «Սղնախի հայոց մելիք Իսուֆը այստեղ (Վրաստան - Ա. Մ.) թաղաւորների մօտ եկաւ իր ընտանիքով՝ 60-ի չափ մարդկանց ուղեկցութեամբ: Սղնախը դատարկուել է: Իրօք հացի թանկութիւն է եղել այնտեղ... Գիւղացի-ուսլաթը Փանախանին է մնացել: Մելիք Ադամն իր ընտանիքը Գեանջա է ուղարկել, ինքը դեռեւս իր բերդումն է գտնուում, սակայն ներկայումս ոչ մի տեղից օգնութիւն չի երեւում»³⁰: Այսպիսով, չգիմանալով Փանահ խանի յարձուն ճնշմանը, մելիքներն իրենց զօրքի եւ ժողովրդի մի մասի հետ հեռանում են իրենց տիրոջներից եւ ապաստանում Գանձակի Ծահվերդի խանի մօտ՝ սպասելով յարմար առիթի՝ Փանահի դէմ իրենց արիւնոտ գօտեմարտը շարունակելու համար: Եթե տարի մելիքները մնում են Ծամխորում՝ Հիմնականում այս իրադարձութիւններն են ներկայացուած Միրզա Աղիգեօղալ-Բէկի

28 Լ. Մելիքսեթ-Բէկ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Գ, Եր., 1955, էջ 107, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., Документы подобрал, подготовил к печати и предпослал им исследование В. Гамрекели, Тбилиси, 1968, с. 140:
 29 Լ. Մելիքսեթ-Բէկ, Աշխ., էջ 108:
 30 Նոյն տեղում, էջ 109, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., с. 296.

«Ղարաբաղ-Նամէ» աշխատութեան հրատարակուող գլուխներում:

Փանահի մահից յետոյ (1762) նրա որդին եւ յաջորդը՝ Իբրահիմ խանը (1762-1806), ստիպուած էր դեռ երկար պայքար մղել ինքնիշխան հայկական մելիքութիւնների դէմ:

Այստեղ ցանկանում ենք անդրադառնալ նաեւ Ղարաբաղի խաների վերաբերեալ հնչած մի անհեթեթ կարծիքի, որի հեղինակն է ադրբեջանցի պատմաշինարար Ֆ. Աբասովը: Վերջինս 2007 թ. Բաքուում հրատարակուած իր «Ղարաբաղի խանութիւնը» գրքում Փանահ խանին, Իբրահիմ խանին եւ Մեհմեթ-Ղուլի խանին ներկայացնում է որպէս, ո՛չ աւել, ո՛չ պակաս, ադրբեջանական երկրի մեծ հայրենասէրներ³¹: Այնինչ, իրականում գոյութիւն չունեցած երկրի շինծու «հայրենասէրների» հայրենաճանաչման պարագիծը երբեք էլ անցել սեփական տիրոջների սահմաններից անդին: Այդ մասին են վկայում խանութիւնների տիրակալների միջֆէոդալական անընդմէջ բախումները, որոնց մասին բազմաթիւ տեղեկութիւններ կան նաեւ Միրզա Աղիգեօղալ-Բէկի եւ Ղարաբաղի խանութեան միւս պատմագիրների աշխատութիւններում: Մերօրեայ հասկացութիւններից ելնելով՝ նմանատիպ անհեթեթ յայտարարութիւնները խօսում են միայն ադրբեջանցի պատմաշինարարների մօտ ժամանակի զգացողութեան կորստի մասին:

Ամփոփելով՝ նշենք, որ չնայած Միրզա Աղիգեօղալ-Բէկի «Ղարաբաղ-Նամէ» երկում Ղարաբաղի խաների ազդեցութիւնը գերադասատուած է, այնուհանդերձ, այս աշխատութիւնը կարելի էր սկզբնաղայն է Արցախի մելիքութիւնների պատմութեան համար:

Հրատարակելով Միրզա Աղիգեօղալ-Բէկի «Ղարաբաղ-Նամէ» աշխատութեան աւելին երեք գլուխների հայերէն թարգմանութիւնը՝ փակագծերում նշել ենք ձեռագրի էջահամարները, բացել ենք յապաւումներից, իսկ բաց թողնուած տառերը լրացրել ենք նաեւ՝ անտեսել ենք «ի» նախդիրից առաջ գրուած ապաթարցները եւ կէտադրութիւնը սրբագրել ըստ արդի հայերէնի կանոնների:

Հիշելի թուականները եւրոպականի վերածելիս օգտուել ենք ակադ. Յ. Օրբէլու կազմած «Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления» գրքից³²:

Չփոխելով թարգմանութեան ուղղագրութիւնը, տառասխալները նշել ենք սովորականից տարբերուող տառատեսակով: Որոշ գէպերում, ընթերցողների շահերից ելնելով, միջամտել ենք նաեւ թարգմանչի պարբերաբաժանմանը՝ մեծ պարբերութիւնները սրբահղով աւելի մանր հատուածների:

32 Орбел И., Синхронистические таблицы хиджры и европейского летосчисления, М.-Л., 1961.

31 Абасов Ф., Гарабагское ханство, Баку, 2007, с. 153.

(2ա) ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆԸ ԽԱՆԱՅՆ ԳԱՆՁԱԿԱՅ

Որովհետեւ ի փոփոխութիւնէ ժամանակին բարձաւ թագաւորութիւն Սաֆաւեացի¹, եւ երկիրն Իրանայ շունէր զոք արժանաւոր առ ի թագաւորել, վասն այն ամենայն ոք զլուխ ամբարձեալ՝ զանուն թագաւորութեան կամէր ժառանգել: Մինչեւ ի վախճանի նաւար արքայն ափշար կրխլուցի² յերկրէն Աբալարտաց տէրութեան հորասանու յայտնեցաւ, զամենայն զնեղութիւնս եւ շարշարանս Իրանայ ի բաց բարձեալ, վերջապէս ի լայն եւ յրնդարձակ դաշտին Մուղանայ ի 1148 ամի³ եւ Փրկչին 1732 զիշխանս եւ զմեծամեծս Իրանայ հաւաքեալ՝ վասն ընտրութեան թագաւորի սկիզբն ժողովոյ արար անդ⁴:

1 Նկատի ունի Իրանում 1502-1736 թթ. իշխած Սեֆեան արքայատոհմը, որն իր անուանումը ստացել է շիա մահմեդականների Սեֆեիյէ աղանդի առաջնորդ շէյխ Սեֆի էդ Դիմի անուանումից: Սեֆեան թագաւորական տոհմի հիմնադիրն էր շէյխ Սեֆիի սերնդից Խամայիլ I-ը, որն իշխել է 1502-1524 թթ.: Հարողջեան գագաթնակետին է հասել Շահ Աբբաս I-ի (1587-1629) օրոք: 1736 թ. Նադիր շահը վերացրել է Սեֆեան արքայատոհմի իշխանութիւնը:

2 Նադիր շահը պատկանում էր թուրքմենական աֆշար ցեղի զինու ցեղախմբին:

3 Հիշքի 1148 թ. սկսուել է 1735 թ. մայիսի 24-ին եւ ասարտուել 1736 թ. մայիսի 11-ին: Մուղանի «կոտորութիւնը» (առազանու ժողով) տեղի է ունեցել 1736 թ.:

4 Մուղանի «կոտորութիւն» մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Աբրահամ Կրետացի, Պատմութիւն, քննական բնագիր, ուս. թարգմանութիւն, առաջաբան եւ ծանօթագրութիւններ՝ Ն. Ղորղաւեանի, Երեւան, 1973, էջ 111-142:

Յայնժամ Շահ Քահանասուր եւ որդի նորա Միրզայ-Աբբասն, որ էր մանուկ ամաց շորեքտասանից⁵, կենդանի էին⁶:

Նաւար արքայն յայտնեաց ժողովրդեան, թէ՛ «Խորհուրդս այս ամենայն մեծանց եւ փոքունց յայտնի է, զի թագաւորութիւն Իրանայ ի բազում ժամանակաց հետէ գտանի յանկարգութեան եւ անձինք անարժան կամին տիրել այնմ: Եւ ի շփոթութեանց ժամանակին թագաւորք Սաֆաւեաց տոհմին կան վարանեալ, իսկ եւ ամենայն անկարգութեանցս չհամբերելով՝ շրջեալ ընդ անապատս եւ ընդ դաշտս, բազմապիսի հնարիւք գայնս ի բաց խափանեցի եւ զաւերեալ թագաւորութիւնն Իրանայ ի ձեռաց թշնամեաց ազատեցի: Այժմ էն ի միջի Շահ Քահանասուրն եւ որդին նորա Միրզայ-Աբբասն (2բ) որք կարի արժանի երեւին, զորն ի նոցանէ արժանի թագաւորութեանն զիտէ՛ք՝ թագաւոր արարէ՛ք, որում եւ ես ի միասին ընդ ձեզ հպատակեցայց»:

Ժողովուրդք Իրանայ միախորհուրդ եւ միաբան աղաղակ բարձեալ՝ ասէին, թէ՛.

«Թագաւորութիւն Իրանայ վայել է այնմ անձին, որ զխոտովութիւն ի քաղաքէ մերմէ վերացոյց՝ զխուս վշտակրութեանց ի բաց յատկացեալ յայնմանէ, եւ գերեաց մասնելոց կա-

5 Ըստ Միրզա Աղիգեօզալ-Բէկի աշխատութեան նուսերէն հրատարակութեան՝ քառամեայ, որը ճիշտ է (տե՛ս Мирза Адигезаль-бек, Карабат-Наме, с. 46):

6 Նադիրի կողմից զահրնկէց արուած շահ թահմասպ II-ը իր դեռահասակ որդիների՝ Աբբաս III-ի եւ Խամայիլի հետ աքսորուել ու պահուում էր Սաբախվար քաղաքում (տե՛ս Ս. Տէր-Աւետիսեան, Նադիր շահի արշաւանքները (ըստ Յակոբ Շամախեցու), Երեւան, 1940, էջ 36. Քիչու՞ք Արութին, Պատմութիւն թահմասպ Ղուլու, Մատենադարանի գիտական նյութերի ժողովածոյ՝ թիւ 1, 1941, էջ 124):

պանաց յօտարութեանս՝ զազատութիւն շնորհեաց»:

Թէ՛ եւ զառաջինն արքայն նաւար յընդունելոյ զանուն թագաւորի զանձն ի բաց հրաժարեաց եւ յընթացս միոյ ամսոյ ո՛չ էտ պատասխանի ինչ, բայց յետոյ հայեցեալ՝ ետես, զի չիք ոք բաց յինքնէ անձն արժանաւոր, ուստի եւ նստաւ յաթոռ թագաւորութեան⁷:

Եւ վասն զի ի ժամանակի թագաւորութեանց տոհմականացն Սաֆաւեաց խանք Գանձակայ, որք Ղաճար կամ Զիրատայ օղլի⁸ եւս անուանեալ էին, վասն անսուտ բարեկամութեան իրեանց ընդ յիշեալ թագաւորացն Սաֆաւեաց բէկլարբէկի եւ տէր իշխանական կարողութեան եղէն: Ի վեր քան զկամուրջն Մնղայ⁹ զՍարգաշն վրաստանու, հանդերձ եւ զսուտայֆիրինայ կամուրջն¹⁰ ընդ Ատրապատականին, սահման արարին, եւ Տիխիսայ եւս հրամանատու երբեմն լինելով սոքա ի ժողովս Մուղանայ յայտնի եւ ի ծածուկ ջան եղեալ՝ գուն գործէին, զի բաց ի շառափղացն Սաֆաւեաց թագաւոր մի լիցի եւ ո՛չ ոք յօտարաց եւ զբարձի (Յա) թագաւորութեան մի՛ թիկն ամիցէ: Այս ամենայն յայտնեցաւ արքային նաւիրայ:

Յորժամ թագաւորեցաւ սա, յիշատակեալ խանացն Գանձակայ վասն ի վաղ ժամանակաց հետէ մեծարգութեան նոցա զայլ ինչ գատաստան եւ պատիժ ոչ կարաց տալ, այլ միայն զԲօշչալու Ղազարին ընդ խանաց եւ աղալարաց նոցա կարգեաց կառավար եւ հրամանատու

7 Նադիր շահը թագադրուել է 1736թ. մարտի 8-ին:

8 Գանձակի Զիրատլի ցեղի խաների մասին ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում ԺԷ. Դ. պարսիկ պատմագիր Մուհամմեդ Մասում Խաֆաւանին իր «Հուլասեթ աւ-սիլար» աշխատութեան մէջ (տե՛ս Мухаммед Масум ибн-Ходжаги Исфгани, Хуласет ас-суйар («Суть жизнеописаний»). Глава «Краткий очерк истории рода Зийад оглы и описание Гянджи», «Известия Азербайджанского историко-родословного общества», 2001, вып. 3, с. 109-132):

9 Մընըղ-քեօրփի՝ աղբք. «կոտորած կամուրջ», այդպէս էր կոչուում Խրամ գետի վրայ գոցուած կամուրջը:

10 Կամուրջ Արաքս գետի վրայ՝ Խոտլափերին գիւղի մօտ:

վրաստանու: Եւ զբնակիչս Ղարաբաղու, որ էն ջիվանշիր, օթուզիքի¹¹ եւ քաբ[ի]րլու, շուեցուցեալ ի Սարխաս անուն գաւառակն երկրին հորասանու՝ բնակեցոյց անդանօր:

Եւ համայն մէլիքաց եւս էտ հրաման, զի ամենեւին չհնազանդելով խանացն Գանձակայ զինքեանս ազատ գիտացին եւ զհարկաւորեալ խնդիրս, առանց հաղորդութեան ուրուք, ինքեանք առաջի արացեն շահին:

Խանք Գանձակայ, վասն ելանելոյ ի ձեռաց իւրեանց իշխանութիւն եւ ի բաց լինելոյ յայնմանէ, կարի յոյժ նուազեալ սրտաբէկ եղէն:

ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆԸ ԽԱՆԱՅՆ ՂԱՐԱԲԱՂՈՒ, ՈՐՈՑ ՍԿԻՉԲԸ Ե ԽԱՆՆ ՍԱՐՈՒՋ ՆԱԼԵԱՅ

Իսկական ազգաբանութիւնն սոյն տոհմի յԱրկուն խան Զինկիլ[է]յան խանէ համարէր ծագեալ¹², բայց ըստ որում սովորութիւն է փոփոխական ժամանակին, որ զհարստութիւնն եւ փթագաւորութիւնն ո՛չ մշտապէս թողու ընդ ուզմեք, ի ժամանակի գտանելոյ Ջէնկիլեան տոհմին (Յբ) ի շփոթութեան եւ յաղճուկս ոմն ի նոցանէ յանճարութեանէ ի փախուստ անկեալ գնաց ի վրաստան եւ անդ ի բերդն Լուրի¹³ գաղտ բնակէր: Եւ յորժամ զգործս խանացն Գանձակայ ի լաւագոյն ընթացս ետես, էլեալ անտի՛ շոգաւ առ նոսա եւ ծառայէր նոցա:

Եւ իբրեւ զինքն ի վեր, քան զաստիճան ծառայութեան գիտաց, եկն առ ժողովուրդն Զիվանշիր գաւառակին Ղարաբաղու երկրին, ուրանսոր եւ կարի յոյժ հարստացեալ ամուսնաւորացն եւ կարի յոյժ հարստացեալ Ալի: Եւ վասն շիկագոյն լինելոյ նորա մարմնով հայրն

11 Օթուզիքի՝ թուրք. «երեսուներկու», քրդական եւ թիւրքական 32 մանր ցեղերի արհեստածին միատրում էր, որի մէջ մտնում էր նաեւ ջեւանշիր ցեղը:

12 Միրզա Աղիգեօզալ-Բէկի աշխատութեան նուսերէն հրատարակութեան մէջ այս աւանդութիւնը բացակայում է (հմմտ. Мирза Адигезаль-бек, указ. соч., с. 49):

13 Հայկական Լոռի երկրամասն այդ ժամանակաշրջանում գտնուում էր վրաստանի իրաստութեան ներքոյ:

մուր ինչ-ինչ ի բնակութիւն վասն յապահովի կալոյ յերեսաց թշնամեաց եւ ի բաց շնջելոյ զնոսա ի սահմանաց իմոց:

(Ծբ) Ուստի եւ զհիմնարկութիւնն Բայաթ բերդին զադարեցուցեալ էկն ի Թարնակիւտ²⁷, որ Շահբուլաղ անուանի, եւ ի ստորոտ բլրոյ իրիք սկիզբն արար շինուածոյ բերդի, մզկթաց, տանց, շուկայից եւ բաղանեաց, որք եւ ի 1165 ամի²⁸, 1749 յամի Տեառն, ի գլուխ հասին: Եւ անդանոր բնակեալ ընդդէմ Ջրաբերդու եւ Թալիշու մէլիքացն պատերազմ յարուցանէր, եւ հետզհետէ ջան դնէր ի ցրել զժողովս նոցա:

Ի սմին ժամանակի մէլիքն վարանդայ գաւառակի Մելիք-Շահնազարն, հարեալ ընդ սէր մէլիքութեան, զհօրեղբայրն իւր զՄելիք-Հիւսէինն²⁹ սպան զհամբաւ մէլիքութեան իւրոյ

հրապարակելով յաշխարհի: Ի լսելն զհամբաւ գայս համասայ մելիքք միաբանեալ ընդ միմեանս՝ ընդդէմ Մելիք-Շահնազարայ պատերազմ յարուցին, ուստի եւ իւրաքանչիւր ոք ի նոցանէ, առեալ զբազմութիւն արանց հպատակաց իւրոց ել ի վերայ նորա՝ ասելով, թէ.

«Ընդէ՛ր նա տարապարտոց թշնամացեալ սպան զարժանապատիւ զհօրեղբայրն իւր»:

Իբրեւ էկին նոքա՝ շորս մելիքք, Մելիք-Շահնազարն յԱւետարանոց գեղջ ամրացաւ ի բերդին, կառուցելոյ անդանոր յինքնէ: Նոքա՛ յարուցեալ զմելիքքն, զբոլոր գաւառակն վարանդու աւիրեցին, բայց զբերդն, ուր ամրացեալ էր Մելիք-Շահնազարն, առնուլ ո՛չ կարացին: Եւ, ի վերջոյ, առանց հասանելոյ ի նպատակ կամաց իւրոց, դարձան եւ զնացին՝ պայմանադիր եղեալ, զի ի ժամանակի գարնան անդրէն եկեալ զբերդն առնուցուն:

(Ծա) Մելիք-Շահնազարն, տեսեալ զտկարութիւն իւր, ի հոգս անկաւ զհետեւանաց գործոյն եւ էկն առ զերաստիջան խանն, որում եւ ծառայէր հաւատարմութեամբ, որպէս եւ զտեղին, ուր հիմնեցաւ Շուշի բերդաքաղաքն, եցոյց յիշեալ խանին, որ զկնի հաւանելոյ տեղւոյն՝ սկիզբն արար ընդ Մելիք-Շահնազարին շինութեան այսր ամրակառուց բերդի³⁰ (զորմէ յիւրում համապատշաճ վայրի խօսել կայ)³¹:

Իբրեւ ձայն արդարադատութեան, քաջութեան եւ բարձրապատուութեան խանին զհոշակի հարաւ յերեսս Երկրի, ժողովուրդք բազումք յօտար տեղեաց, ապաւինեալ ի տէրութեան շուե-

մանրամասն քննութիւնը տե՛ս Ա. Մաղալեան, Գ. աշխ., էջ 173-182):

30 Այստեղ խօսք կարող է լինել միայն բերդի վերակառուցման մասին: Անվիճելի է, որ Շուշիի բերդը գոյութիւն է ունեցել դեռեւս ժ.Ղ. դարի սկզբին (տե՛ս *Армяно-русские отношения в первой трети XVIII века*, т. II, ч. I, Ереван, 1964, с. XLI, Պ. Չորանեան, *Շոշ եւ Քարազուխ սղակիւների նոյնանուն հարցի շուրջ*, ՊՐՀ, 1994, թիւ 1-2, էջ 183-187, Նադիր շահի դարաշրջանի պատմագրական յուշարձանները, էջ 59):

31 Հեղինակն այդ մասին խօսում է իր երկի չորրորդ՝ «Հիմնարկութիւն Շուշի բերդաքաղաքի» գլխում (տե՛ս Մատենադարան, ձեռ. թիւ 4463, էջ 9ա-10բ):

27 Թառնակիւտը Հայոց արքայ Տիգրան Մեծի (Ք.ա. 95-55) կառուցած չորս Տիգրանակերտներից մէկի աղաւաղուած անունն է, գտնուել է Ադրիանի շրջանում, վանքասարի ստորոտում (տե՛ս Ս. Կարապետեան, *Հայ մշակութիւնի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, Երեւան, 1999, էջ 227): Այժմ այնտեղ պեղումներ է իրականացնում ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի արշաւախումբը՝ պատմ. գիտ. դոկտոր Համլետ Պետրոսեանի ղեկավարութեամբ (տե՛ս Հ. Պետրոսեան, *Արցախի Տիգրանակերտի եւ շրջակայքի հնագիտական հետազոտութեան առաջին արդիւնքները*, «ԼՂՀ. անցեալը, ներկան եւ ապագան» միջազգային գիտաժողովի նիւթեր, Երեւան, 2007, էջ 434-445):

28 Հիշքի 1165 թ. սկսուել է 1751 թ. նոյեմբերի 20-ին եւ ասարտուել 1752 թ. նոյեմբերի 7-ին: Իրականում Շահբուլաղի բերդը կառուցուել է 1749 թ. (տե՛ս Լ.Էօ, *Երկերի ժողովածոյ*, հտ. 3, գիրք 2, Երեւան, 1973, էջ 265):

29 Այստեղ Ադիգեօզալ-Բէկը շփոթել է նրանց ազգաբանութիւնը: Ըստ Բաֆֆոյ՝ «Մելիք-Յովսէփը (որին պարսիկները Յուսէին էին անանում - Ս. Մ.) եւ Մելիք-Շահնազարը խորթ եղբայրներ էին, Յովսէփը ծնուած էր Մելիք-Յուսէինի Աննա-Խաթուն անունով կնոջից, որը Տիգրանի իշխան Մելիք-Աւանի քույրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնուած էր Չոհրա-Խանումից, որը Նախիջեանի խանի աղջիկն էր, ազգով թուրք: Մելիք-Յուսէինը նրան իբրեւ գերի բերեց Նախիջեանից, յետոյ ամուսնացաւ նրա հետ» (տե՛ս Բաֆֆի, *Խանայի մելիքութիւնները*, էջ 452, հարցի

ցին ի Ղարաբաղ, ուրանոր եւ ծառայէին խանին: Այլ բնիկ ժողովուրդ Ղարաբաղու երկրի, բաց ի գիւղականաց ոմանց, են հասարակութիւնքն շիվանշիրու, օթուզիքի եւ քաբիրլուի, յորոց եւ վերջինքս այսօրիկ պարտուպատշաճն հպատակութեամբ կային ի ծառայութեան նմին: Բայց բնակիչք գաւառակացն Ջիվանշիրու եւ Օթուզիքիքն երբեմն-երբեմն յայտնէին զներքին իւրեանց ատելութիւն եւ զնախանձ:

Եւ հինգ գաւառակք, որ անուն համասայից անուանակոչեն եւ իւրաքանչիւրոցն յայնցանէ անուանք յայտնի են, զի այնոքիկ գաւառակք ըստ հինգ թուոյ համասայ կոչեն, վասն զի յարաբացի լեզու թիւն հինգ համասայ ձայնի: Յիշատակեալ գաւառակք են յետագայքս.

Ա. Դիզակ, որոյ մելիքք էին Մելիք-Եկանեանքն, որ յՈրմի³² քաղաքէն պարսից ի փախուստ անկեալ՝ Էկք էին ի ժամանակի (Ծբ) թագաւորութեան Նաաիր շահին³³, ըստ հրամանի նորին ամբարձեալ էին յաստիճան մելիքու-

32 Իրականում Դիզակի Մելիք-Եգանեանների՝ Որմիայից ծագելու վարկածն անհիմն է: Ըստ Միրզա Ադիգեօզալ-Բէկի աշխատութեան ուստերէն հրատարակութեան՝ Մելիք-Եգանեանները Ղարաբաղ են եկել Լոռուց (տե՛ս *Мирза Адигезал-бек, указ. соч.*, с. 57): Միրզա Ադիգեօզալ-Բէկի աշխատութիւնը գրուած է եղել արաբատառ թուրքերէնով, որի դեպքում այդ տեղանունների գրութիւնը նման է (տե՛ս Միրզա Իւսուֆ Ներսէսով, Գ. աշխ., էջ 40), ինչն էլ դարձել է թիրսնացութեան պատճառ: Այսպիսով, Մելիք-Եգանեանների ծագման Որմիայի վարկածը պատմականորէն հիմք չունի եւ առաջ է եկել լոկ թարգմանչի սխալի հետեւանքով:

33 Մելիք-Եգանեանները Դիզակում հաստատուել են ժ.Ղ. դարի սկզբին, երբ, ըստ Ա. Ջալալեանի՝ «Մելիք-Եգան, որդի Դուկաս վարդապետի, ի նահանգէն Լոռույ ի գեղջէն Արդուոյ, յազգէ Լօրիս Մելիքեանց, մարտ եղեալ ընդ իրում ազգականի ԼՂիքարայ, որ ի նմին ժամանակի տիրէր երկուց նահանգաց՝ Լոռույ եւ Տաշիրայ, ի բաց ասեալ զՄժաւէթն եւ գէաբաթանաձորն, իսկ յո՛չ ստանալն նմա վերաբնակի ընդ իր իրում աղխիւն հանդերձ աշխարհն Արցախու ի նահանգն Տիգրակայ եւ ի գիւղն Տող» (տե՛ս Ա. Ջալալեանց, *Պատմութիւն աշխարհին Աղուանից, Մատենադարան, մանրամասնապատե՛ն թիւ 367, էջ 4, Բաֆֆի-Խանայի մելիքութիւնները*, էջ 428):

թեան³⁴, յորոց Մելիք-Եկանն վասն մեծի հաւատարմութեան եւ ցուցանելոյ նորա զճշմարիտ ծառայութեան կարի յոյժ մեծայարգ եւ երեւելի գտաւ: Եւ յանուն Բաբալի³⁵ (այն է հայր ի տեղի հաւու, պապի) Նաաիր շահի հռչակեցաւ, որպէս ի ժամանակի ձմերելոյ Նաաիր շահի ի գաշտին Մուղանու բոլոր զօրաց նորա տալով զկերակուր՝ պատուեալ է զնոսա:

Ի սմին միջոցի հրամայեաց շահն Մելիք-Եկանայ բերել ինքեան զսունկ տասն լիտր, եւ նա յանձնառու եղեւ, զի պատրաստեցէ: Բայց հպատակք մէլիքի մեծամեծ անձինք ասացին, թէ.

«Վասն է՛ր գայս անհնարին հրաման ի յանձն առէր, ուստի՛ ունիս գտանել զսունկ յայսմ ձմերան ժամանակի»:

Որոց պատասխանի արար, թէ.
«Ես ինքն, ի վերջոյ, տաց շահին զպատասխան»:

Յետոյ զնացեալ առ Նաաիր՝ յայտնեաց նմին, թէ.

«Ըստ հրամանի ձերում առաքեցի զարս յայն տեղիս, որ բուսուցանէ զսունկ, այլ գտին զվայրսն ծածկեալ ձեամբ»:

Շահն խնդացեալ ընդ այս կարի յոյժ ասաց.

«Ես եւս գիտեմ, զի ի ձմերան ժամանակի ո՛չ լինի սունկ, այլ զբեզ փորձէի միայն: Եւ որովհետեւ ի միջի բազմութեան ի հրամանէ իմ մէ՛ ո՛չ կացիր ի բաց եւ ընկալար գայն որպէս կատարելի, վասն որոյ Բաբալլ իմ ես արգարեւ»:

Ասեն եւս, թէ գտիկին Մելիք-Եկանի հրաւրեալ են ի հացկերոյթ յառանձնոց թագուհեացն Նաաիրայ, որոյ վասն եւ զարքայապալել խոր-

34 Ըստ Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրութեան՝ նրա մելիքական իրատուները սկզբնապէս հաստատուել են Սեֆեան շահ Թահմասպ II-ի կողմից, իսկ յետոյ Նաաիր շահը Մելիք-Եգանին վերահաստատուել է այդ պաշտօնում (տե՛ս Յ. Փափազեան, Գ. աշխ., էջ 77):

35 Բաբալլը՝ թուրք. «հայրացու»:

Մելիքն Ջրաբերդու Ալլահդուլի սուլթանն, յառաջին վեր երեւման Փանահ խանայ եկն ի տեսութիւն նորա յԱմարաս: Կառավարն նախիջեանայ Հէյտար-Ղուլի խանն, (Տբ) եւ հիւր էր առ Փանահ խանին: Սա ի տեսանէլն զպատիւ եւ զբարձրութիւն Ալլահդուլի սուլթանին՝ յայտնեաց Փանահ խանայ, թէ:

«Այսպիսի սուլթան չունի հնազանդել քեզ եւ երկու մեծապատիւ անձինք ի միում քաղաքի ո՛չ ի գլուխ երթիցեն, որպէս ասի յառական՝ աղքատք տասն ի մի մահճի ննջել մարթին կամ արքայք երկու յերկրի միում ո՛չ զետեղին: Արժան է զնա ճարակ սրոյ տալ եւ բառնալ ի կենաց, եւ այն՝ այժմ իսկ աստանօր ի յԱմարաս»:

Փանահ խանն հաւանեալ ընդ խորհուրդ Հէյտար-Ղուլի խանին՝ զԱլլահդուլի սուլթանն սպան⁵²: Եւ եղբայր նորա Մելիք-Աղամն, գաւառակին Ջրաբերդու մելիք եղեալ, ընդ Մելիք-Ուսուբայ՝ Թալիշու մելիքին, որ ի յորդորանաց Մելիք-Աղամին զհօրեղբայրն իւր սպանեալ կայր⁵³, նստեալ յաթոռն Թալիշու մելիքութեան, միաբանեալ թշնամանօք ընդդէմ խանին եւ ի

52 Ըստ Մատենադարանու պահուող ձեռագիր ժամանակագրութիւններէց մէկի՝ «ՌՃՂԸ (1749) թուին Փանահն էսպան մելիք Ալլադուլին՝ սեպտեմպեր ամսումն» (տե՛ս Մատենադարան, ձեռ. թիւ 7816, էջ 20բ, Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., հտ. I, կազմեց՝ Վ. Յակոբեան, Երեւան, 1951, էջ 396, Ա. Մաղալեան, նշ. աշխ., էջ 105):

53 Խօսքը Գիլիստանի մելիք Թամարազի սպանութեան մասին է: Ըստ Մատենադարանի թիւ 7816 ձեռագրում տեղ գտած ժամանակագրութեան՝ «ՌՃՂԹ (1750) թվին մելիք Թամարազն սպանեցին՝ մայիս ամսումն» (տե՛ս Մատենադարան, ձեռ. թիւ 7816, էջ 20բ, Մանր ժամանակագրութիւններ, հտ. I, էջ 396, Ա. Մաղալեան, նշ. աշխ., էջ 87):

բերդն Ջերմկայ ամրացեալ ընդ երկար ժամանակ յաճախակի պատերազմեցան:

Փանահ խանն եւս ո՛չ սակաւ եցոյց ընդդէմ նոցա զբազմապիսի յարձակմունս. բայց ի պատճառս ամրութեան բերդի նոցա թէեւ դարձաւ առանց հասանելոյ ի նպատակ իւր, սակայն զարտորայս նոցա, որ ի ստորոտ լերինն, ոտնկոխ արարեալ հեծելագորաց իւրոց՝ բոլորովիմբ ապականեաց զայնս: Եւ զանցս ճանապարհաց ի շորից կողմանց խափանեաց, եւ այսպէս զամս շորս նեղութեամբ եւ դառն վշտօք (Ձա) ընդդէմ նորա մնացին ի բերդի անդ յանշարժութեան⁵⁴: Եւ յայնմ ընդ երկար միջոցի բազումք թշնամացան ընդ խանին եւ յամենայն ժամ, ըստ օրինակի օտար թշնամեաց, հասուցանէին յիշեալ խանին ի պատերազմի վնասս բազումս:

Վերջապէս յաղթեալ ի խանէն՝ դարձաւ ի փախուստ ի կողմն Գանձակայ եւ ի գաւառակին Շամքորայ վշտօք եւ նեղութեամբ մնացին զամս Էօթն:

54 Այդ կոնիւնէրի մասին ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում Գաեի կապիտան Օթար Թումանովը՝ Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային յղած իր զեկուցագրերում (տե՛ս Լ. Մելիք՝ սեթ-բեկ, նշ. աշխ., էջ 107-109, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом в XVIII в., с. 140):

ԻԼՈՒ «ՔԱՌԱՍՈՒՆ ԽՈՐԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ» ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կարէն Սաթեւոսեան

Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ձեռագրերում պահպանուել են բազմաթիւ ժամանակագրական միաւորներ, որոնք դուրս են մնացել բնագրի հայերէն միակ հրատարակութիւնից¹, բայց այժմ յայտնի դառնալով, օգնում են պատմական տարբեր հարցերի լուծմանը: Այդպիսի մի հարցի պարզաբանմանը զգալի նպաստ է բերում Մատենադարանի թիւ 1899 ձեռագիրը², որի անտիպ վկայութիւններից մէկը վերաբերում է Վանայ լճի հարաւում Իլի կամ Իլու բնակավայրում Վասպուրականի թագաւոր Գագիկ Արծրունու հիմնած եկեղեցուն եւ դրա կառուցման շարժառիթին:

Եկեղեցին գրականութեան մէջ յայտնի է «Իլու Քառասուն խորան Ս. Աստուածածին» անունով, որն սուաջացել է խորանների ու աւանդատների բազմաքանակութիւնից:

1 Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ առարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յանդիմաններով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893 (այսուհետեւ՝ Անեցի):

2 Սամուէլ Անեցու «Ժամանակագրութիւնը» հրատարակելիս Ա. Տէր-Միքելեանն օգտագործել է այս մատենան (որպէս Բ օրինակ), սակայն որս մէջ եղած մի քանի ժամանակագրական միաւորներ տեղ չեն գտել: Էջմիածնի Գաղիկի համարը՝ 1697: Ձեռագիրը գրուած է թղթի վրայ, բոլորգրով (թերթ՝ 447, 23,17սմ): Ժամանակագրութիւնը զբաղեցնում է ձեռագրի սկզբնամասը (թերթ 1ա-74ա): Ժողովածոյ է՝ գրուած 1676 թուականին Ամրդոլու վանքում, գրիչն է Պօղոս Գաւառցի՝ Վարդան Բաղիշեցու սանը, որի համար էլ ընդօրինակել է մատենանը: Ձեռագրի մասին տե՛ս Կ. Սաթեւոսեան, Սամուէլ Անեցու ժամանակագրութեան ձեռագրերը եւ նորայայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 69-71:

կութիւնից: Կառուցման վերաբերեալ հնագոյն վկայութիւնները բացակայում են: Համազասպ Ոսկեանի վկայաբերած՝ Աղթա-մարի ու շրջանի մի կոնդակում ասուում է, որ եկեղեցին Գագիկը կառուցել է Աղթա-մարի եկեղեցուց յետոյ, որպէս դրուց վանք, որպէսզի ամռանն այնտեղ բնակուէին կաթողիկոսարանի միաբանները: «Շինեցին զԻլու եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնի եւ սուրբ Փրկչին եւ սուրբ Սիոն, դրուց վանք, զի բնակեցեն ի նմա յամառային ժամանակն, որ ԲՃ (200) արեգա էին»³: Իսկ Երուանդ Լալայեանը, ԺԹ. յա էին»³: Իսկ Երուանդ Լալայեանը, ԺԹ. դարի վերջերին վանք այցելելով, գրում է. «Այս վանքը համարուում է Գագիկ Արծրունուց շինուած եւ այժմ ծառայում է իբր Ինուց շինուած եւ այժմ ծառայում է իբր Իլու գիւղի ծխական եկեղեցի»⁴: Ի. դարի սկզբին կանգուն էին միմեանց կից երկու եկեղեցական կառույցներ (որոնցից մէկը՝ աղթամարեան գաղթի փառահեղ ճարտարապետութեամբ), բայց այժմ դրանք ամբողջովին աւերուած են:

Ինչպէս նշուեց, Գագիկն այս եկեղեցին ու վանքը կառուցել է Աղթամարի Սուրբ Խաչի՝ 915-921 թթ. կառուցումից յետոյ: Նորայայտ ժամանակագրական միաւորը ներկայացնում է եկեղեցու կառուցման բուն շարժառիթը եւ յաւելեալ մանրամասներ, սակայն մինչեւ այն վկայափոխելը, անհրաժեշտ է մի փոքր յետ գնալով համառօտակի ծանօթանալ Գագիկ Արծրունու գործունէութեանը, պարզաբանել Հայոց կաթողիկոսական աթոռի հետ նրա ունեցած

3 Հ. Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 159:
4 Ե. Լալայեան, Վասպուրական. նշանաւոր վանքերը, Թիֆլիս, 1912, էջ 33: